

Շնորհակալութեամբ ստացանք մեր շնեա-
րանին համար դրկոռած՝ Մեծապատիւ Պր. Գրիգոր Խայարեանցի՝ Լազարեան ձեռնարանի
ռասուցչին հետևեալ կարևոր հրատարակո-
րիսնն՝ ի առա չեզոք :

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Պ Ե Պ

Ի Հ Ա Յ Ո Ց Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ե Ա Ն Մ . Ի Ռ Ր Ե Ն Ա Յ Ի Ո Ց

Փ Ր Ձ Ք Ն Ն Մ Դ Ա Տ Ո Ւ Թ Ե Ա Ն Ա Ղ Բ Ե Ր Ա Յ

Մ ան Ա .- Հեռուցողութիւն : Մ ան Բ .- Աղբեր :

Տպ . Ի Մոսկուա , 1896

Հեղինակին այս երկասիրտաբան, ինչպէս
նշանակեցինք առաջին յեզուա գրուած շինելով՝
անշուշտ փափագելի էր այդ լեզուին անծանօթ
բանասիրաց, անոր հայերէն քարգմանտաբանը
կարդայ . աակայն մենք վերապահելով այդ շա-
յիկան գրոց քարգմանտաբանը նոյն իսկ հե-
ղինակին, մեր ընթերցողաց լոկ ներքին պա-
րոնանկութեան վրայ գաղափար մի տալու հա-
մար՝ կը քարգմանեմք միայն անոր յատարա-
բանը, յարորդ պրակին թողով ներածութեան
քարգմանտաբանին, որոյ բովանդակութեան
ցանկն կը ղենեք զկնի յատարանին :

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Մովսիս Խորենացոյ «Պատմութիւն Հա-
յոց» երկասիրութեան աղբերաց քննագա-
տութեան նկատմամբ տակաւին շատ բան
կատարուած չէ : Մինչև ցարդ յերեւան ե-
լած աշխատասիրութիւնք, որոց նպատակն
եղած է՝ գրականութեանս այդ ամենակե-
տաքննելի յիշատակարանը լուսարանել, ս-
վորաբար կը վերաբերին անոր առանձին
մասանց, ինչ ինչ հատուածոց և կամ մի քանի
գլխոց . որով երեւց յառաջ բերած եզրակա-
ցութիւնք, որպիսի և իցեն, կարող են լոկ
մասնական յատկութիւն ունենալ պատշաճելով
այս ինչ տեղոյ կամ այն ինչ գլխոց : Արդ,
յայտ մասին գլխաւոր երկասիրութիւնն,
որ է՝ Գարագաշեանի քննադատական պատ-

մտքին Հայոց, կարելի է թէ՛ ըստ պա-
հանջման յատուկ առաջարկութեանն՝ պահ
մի կանգ կ'առնու զբաղելու Խորենացոյն
աղբերաց ուսումնասիրութեամբ, ամենայնչին
բացառութեամբ, բայց Հարեւանցի . իսկ Հայ
պատմագրին կարեւորագոյն աղբերաց մին,
այսինքն է՝ Հայկական վէպը, հմուտ հեղի-
նակն՝ հակառակ իւր քննադատական ու-
նոյն՝ ամբողջին իբրու ստղգ կ'ընդունի,
առանց բնաւ հաւաստելու : Յայտ է, թէ
այս կերպով մեր այս մեծ ամբողջին այս
կամ այն մասունք՝ երկրորդաբար կ'ուսում-
նասիրուին . նորա տարակուսի կ'ենթարկուին
կը մերժուին՝ իբր յետնագոյն յաւելուածք,
կեղակարծ (apocryphe) կը ցուցուին, և կը
նշանակուին իբրու տարածմութիւն (ana-
clironisme) . սակայն Մովսիսի պատմական
երկասիրութեան ամբողջական բովանդակու-
թիւնն ընդհանուր եզրակացութեան մի շիյան
գիր . հետեւաբար և «Պատմութեան Հայոց»
արժանահաւատութեան և անոր գրութեան
ժամանակին նկատմամբ յուզուած խնդիրք՝
տակաւին առանց լուծման կը մնան : Եւ սա-
կայն, Հայ պատմական գրականութեան մէջ
Խորենացոյն գրուած եղական դրից պատ-
նաւաւ, առանց այս եւսկան խնդրոց որոշ-
ման, Հայոց Հին պատմութեան ուսումնասի-
րութեամբ պարապիլ մտածելու բան չէ :

Գրուածոյս Հեղինակն իրեն նպատակ դրաւ
ուսումնասիրել Մովսիսի «Պատմութիւնը»
իւր ամբողջ բովանդակութեամբ . ես ջանաց
հետեւել Մովսիսի քայլ առ քայլ, յայտնել
իւրբովանն անոր բուն աղբերքը, և մատնա-
նիչ ընել Մովսիսի անոնց հետ ունեցած առ-
ընդմիջութիւնը : Այս անսպարհով ես կը
համարեի թէ կարելի պիտի լինի ամբողջա-
պէս ընդգրկել, կամ լաւ եւս, ըմբռնել Հայ
պատմագրին երկասիրութիւնը, որով և ընդ-
հանուր և որոշիչ եզրակացութեանց գալ :

Գիւրութեան համար, իմ ուսումնասիրու-
թեանս ենթարկած նիւթերը կարեւոր դա-
տեցայ երկու գլխաւոր խմբի վերածելով՝ հա-
ւաքել զանոնք այն կրկին Հիմնական տարե-
բաց շուրջը, զորս կը բովանդակէ «Պատ-
մութիւնն Հայոց» . որ են, Վիպագրականն
և Պատմագրականն . որով և ասանց իւրա-

